ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Սրբոյն Եպիփանու ասացեալ զանուանս վասն ականց պատուականաց :

Հետաքրքրական բան մըն է տեղեկութիւն ունենալը թէ հինները ականց վրայ ինչ առասպելեալ ու անհիմն կարծիքներ ունէին, և թէ ինչ բժշկական զօրութիւններ կու տային անոնց, որ այսօրուան օրս և ոչ կը յիշուին : Այս որովհետև մարդուս բնութիւնը աշխարհքիս սկզբանէն 'ի վեր իր առջևի եղած առարկաները պրպտելու ու քննելու եղած է՝ ամէն բանի վրայ գիտութիւն ստանալու ու իր բանաւոր միտքը գոհ ընելու համար, անոր համար հնոց անբաւ գրուածքները կորսուելէն ետքն ալ՝ դարձեալ անոնց ուսումնական նիւթերու վրայ ունեցած ծանօթութիւններին մէյմէկ քիչ ինչուան մեզի հասած են դիւրամաշելի մագաղաթներու վրայ : Սրբոյն Եպիփանի գրուածոց մէջ ականց վրայօք պզտիկ գրուածք մը կայ, որ բանասիրաց ախորժելի կրնայ անցնիլ վերի ըսած պատճառներուն համար. և որովհետև նոյն կտորը մեր ձեռագիրներուն մէջ ալ թարգմանած կը գտնուի, պատշաճ սեպեցինք որ օրագրիս մէջ հրատարակենք զայն : Նոյն մէկ կտորը երկու ձեռագիրներու մէջ այլ և այլ թարգմանութեամբ ու այլ և այլ երկայնութեամբ է. և սակայն երկուքէն մէկն ալ բոլորովին նման չէ յունարէն բնագրին : Մենք հոս երկու թարգմանութիւններն ալ հաւատարմութեամբ կը դնենք :

Առաջին ակն՝ սարդիոն. տպազիոն. զմրուխտ. կայծ. շափիւղա. յասպիս. յակունդ. ակատ. ամէթիւստրոն. ոսկէքար. բիւրեղ. եղունկն : Ռուբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա, Եփթաղիմ, Դան, Ասեր, Նեփթաղիմ, Յոսեփ, Բենիամին, Դան :

Սարդիոնն շիկագոյն է, արիւնատեսիլ. գտանի 'ի Նաբելոն մերձ առ Ասորիս. զօրութիւն ունի առողջութեան յայտմունս և 'ի վերս. է եւթանց ակն :

Տպազիոնն կարմրագոյն է. գտանի 'ի Տուպազէ քաղաքն Հնդկաց. զօրութիւնն սորա այս է, որ յորժամ սրբեսս զինքն 'ի բժշկայ յէսանն, նա զերդ կաթն ելանէ ջուրն, և ով ըմբէ զսա՝ աչից և ջերմութեան օգտէ :

Առաջին ակն սարդիոն. զի է իսկ շիկագոյն տեսակաւ, արիւնատեսիլ, աղկերի ձկան կտրածոյ նմանեալ : Այս է օգտակար 'ի յայտմունս և 'ի յայլ վերս որ 'ի սրոյ հատանի :

Երկրորդ ակն տպազիոնն է, նմանեալ կայծականն, և է կարմրագոյն. և գտանի 'ի Տպազէ քաղաք Հնդկաց. և իւր փորձելն այսպէս է. յորժամ լեսես զինք յեսանաւ, ոչ կարմիր իջուցանէ զջուրն կամ զկաթուածն ըստ իւրում՝ գունոյն, այլ կաթին գունով. և ընու շատ ամն ջրով՝ որպէս և կամի լեսօղն. բայց իր կշիռն ոչ պակասէ, այլ նոյն ինքն ակն է որպէս և էրն, ոչ նուազեալ և ոչ պակասեալ : Բայց պիտանացու է որ 'ի նմանէ ելանէ՝ աչաց ախտի. և է ընդդէմ որ ջուրց ծարա-

Օմրուխտն կանաչ է, և դեղնագոյն. մինն 'ի Հնդիկս գտանի, իսկ միւսն Յեթովպիա, ուր է Փիսոն գետն. առասպելաբանեն թէ յառաջատեսութիւն տայ։

Կայծն լուսատու է. գտանի 'ի Կարգեդոն Իբէացւոց, որ Ֆրիկէ կոչի. զօրութիւն ունի 'ի խաւարի լոյս տալոյ որպէս կանթեղ։

Շափեղայն ծիրանէգոյն է իբրև սև էքսամիտոն. իսկ սա գտանի 'ի Հընդիկք. զօրութիւն ունի քոսոց և սընկանց օգտել. կաթամբ սորա օծեալ 'ի յեսանի սրէն, և ելանէ։

Յասպիսն նման է զմրխտոյ, դեղնագոյն. գտանի յեղեր Մորգոմենտոս գետոյ 'ի Կասբիացւոց աշխարհին, և ասեն թէ գազանք երկնչին 'ի նմանէ։

ւոյ և որք 'ի ծովային խաղողոյ մոլեգնին, քանզի զայս կաթուածս բժշկաց մանկունքն արբուցանեն յոլովից։

Յորրորդ ակն զմրուխտն. և է կանաչ դեղնագոյն. և ձիթով մնանի, և լինի 'ի Օմրախտակէ կղզի 'ի լեառն մի, որ Ձիթով ասեն ոռոգել։

Չորրորդ ակն կայծն է. և լինի 'ի Կարքեդոն Իբէացւոց, զոր Ֆրիկէ կոչեն. և գտանի 'ի գիշերի ըստ նմանութեան լամբատի. բայց որք ունինն՝ անհնար է ծածկել, զի թէպէտ որ բազում հանդերձիւք ծածկեն, նշոյլքն երևենան։ Յաստուածային գիրք ասեն զայս ականէս լինել 'ի Փիսոն, որ և ասէ. Ընդ է սուտակն և ակն դահանակ, որ է կայծն և կանաչ։

Հինգերորդ ակն շափեղայն է, որ է ծիրանէգոյն, որպէս դիպակի սևոյ ծիրանափայլ է իւր տեսիլն։ Բայց բազում է ազգ սորայ. ասեն և կապուտակ գոլ իբրև զլազուարդ. և զսա իսկ ասեն գտանել 'ի Հնդիկս Յեթէոպացւոց. ասելի է զի 'ի քլամիդոն և 'ի մատանիսն յաձախ կապեն զակնս զայս թագաւորք. քանզի յորժամ լեսու որք զսա և կաթամբ օծանէ, հալածէ զախտս սընկան և քոսոյ։ Այս և տեսիլն զոր ետես Մովսէս՝ 'ի վերայ շափիլայի ակինն երևեալ, որպէս ասէ՝ թէ Ներքոյ ոտից նորա գործած շափեղայի։

Յասպիս, որ է կանաչ զմրուխտգոյն. և գտանի սա 'ի բերան Մերմենդոս գետոյ և առ Սմաթունդոջ՝ որ 'ի Կիպրոսին է. այլ է խաժագոյն. է և այլ որ գտանի 'ի լերինն՝ Փռիքացւոց, նմանեալ արեան խնջունի. և բազումք են ազգ սորայ և գոյնք. և կայ որ նման է ձեան կամ ծովային փրփրոյ, կամ որպէս խառնեն արիւն ընդ կաթն, որպէս ըմպեն իմաստագէտքն վասն ահի գազանաց. զի ասեն առասպելքն թէ գա-

1 Գունարէն բնագրին մէջ "յԱմաթունդ բերդաքաղաքին Կիպրոսի" կ'ըսէ։

2 Գունարէնը կը դնէ. "յիդա լերին Փռիքացւոց"։

զանք վայրենիք զարհուրին 'ի մարդոյն, առ որ ակնս այս գտանի։

Ղ Լիգիրոն ոչ ուստեք գտանի, և գիւտ սորայ ոչ կարացաք իմանալ և Ճանաչել, ոչ 'ի քնագրոց և ոչ յառաջին իմաստասիրաց. բայց կարծեցի զսա գոլ 'ի վերին Ֆեբայիթ, վասն զի ասեն թէ քարինք իմն կան այսպիսի ականց 'ի տաճարին Աբկլիպիոսի։ Բայց թարգմանի Լիգիրոն, զի է իմն անասուն Լինգիոն կոչեցեալ, որոյ գոյնն է նման եղին որթոյ կամ սօս երնջոյ։ Եւ գտանին այսպիսի ակունքս 'ի ներքին բարբարոսն Ակիւթացւոց. իսկ անդ կայ ձոր մի խոր՝ անհաս 'ի մարդկանէ, լերամբք վիմեղինօք աստի և անտի շրջապատեալ, որպէս զի 'ի վերուստ 'ի ծայրից լերանցն 'ի խոնարհ ուրուք հայեցեալ իբր 'ի պարսպէ, ոչ կարացեալ տեսանել զատակ ձորոյն, այլ 'ի կարի խորութենէն խաւարեալ է որպէս ըզվիհ. իսկ որ առաքին անդ 'ի թագաւորացն առ 'ի գտանել զակունսն՝ մահապարտք են հարկաւ բռնաւորեալք. իսկ նոցա գառինս զենեալ՝ ձգեն զմիսն 'ի վերուստ 'ի յատակս ձորոյն, և ակունքն փակչին 'ի միս գառանցն. իսկ արծուիքն, որ բնակեալ են 'ի ծայրս վիմացն, ընդ հոտոյն իջանեն 'ի խոնարհ, և առեալ զմիսն բերեն 'ի կատարս վիմացն. և 'ի ձեռն այսպիսի հնարից հայեցեալ թէ ուր հանին արծուիքն զմիսն, երթեալ գտանեն զակունսն։ Ունին և այսպիսի ազգումն, քանզի թէ ոք արկանէ զսոսա 'ի վերայ կայծից սաստիկ բորբոքելոյ, ինքեանք ինչ ոչ վնասին, բայց զկայծակունսն անցուցանեն. այլ և թէ ոք առեալ զակնս զայս ծրարեալ 'ի կտաւ ինչ, և դնէ ծրարաւն 'ի վերայ կայծիցն, ինքն որ ունի ձեռամբն՝ չհամբերէ հրոյն, իսկ կտաւն, յորում լինի ակնն, ամենևին ոչ վնասի և ոչ խանձոտի։ Եւ ինքս ակնս այս 'ի ծնունդս կանանց պիտանացու է վասն դիւրածնութեան. այլ և բաջալմանց հնարից հրաժարեցուցիչ է։

Ակատն գտանի 'ի կողմն Ակիւթացւոց. է նման յակունդի՝ կապուտակ

Լիգրիոնն, որ է յակունդն, զսորա գիւտն ոչ գիտացաք, բայց կարծեմք 'ի վերին Եթովպիայէն գոլ. է սա նման կապուտակ ասուոյ, կամ կողենոյ, քիչ մի ծիրանէգոյն. զօրութիւն ունի զի կրակն չայրէ զՀանդերձն ուր և կենայ. սա և կանանց օգտակար է վասն դիւրածնութեան։

տեսլեամբ, գոյն ունելով առիւծոյ. օձից և այլ թիւնաւորաց օգտէ. սպիտակագոյն արտաքուստ՝ նման կարձոյ կամ փղոսկրի։

Ամթիստոնն շրջաբոլոր է. բոցագոյն թանձրութեամբ, բայց նշոյլն սպիտակագոյն է. գտանի յեզր Իբէացւոց ծովուն. ասի թէ զանձրևն և զձմեռն ցուցանէ յառաջ։

Ոսկէքարն ոսկէգոյն է. գտանի 'ի ջրհոր յեզր Բաբելոնի. ստամոքսացաւոց և յորովայնածից օգտէ, յորժամ լեսէ և ըմբէ։

Բիւրեղն խաժագոյն է, ծովանեկ, օդանման. տեսիլ ունի ջրագոյն յակընդի. և գտանի սա 'ի լերինն Տիւրոս յանցս Արիրատայ. ընդդէմ արեգականն ունելով երևի 'ի մէջ իւր լուսափայլ. են և այլ բիւրեղք։

Աղունկն խարտեաշ է. համարձակ խնդան նովաւ հարսունք թագաւորաց. են և այլ եղունկք. օգտակար է ջարդածի. 'ի Հնդիկս գտանի. ասի և սա աքանչելի և գեղեցկատեսիլ։ Այն և այլ եղենկնայք սպիտակ ապակէնմանք և կձոյ նմանք. զտեղին ոչ գտաք ուստի իցէ, բայց գեղեցիկք են տեսակօք, նա և գործովք ըստ կար իւր։

նմանութեան կձոյ. և սա 'ի կողմանս Ակիւթացւոց գտանի. այլ ակատն առիւծաձև և առիւծատեսիլ, զոր եթէ ոք լեսեալ ջրով և օծեալ զտեղիսն ըզխայթեալսն 'ի յօձից և 'ի կարձացն, մերժէ զթոյնս հարելոցն զիժից և ըզկարձացն և զայլոց գազանաց։

Ամեթիստոն ըստ իւրում շրջաբերութեանն բոցագոյն է թանձրութեամբ, բայց նշոյլք նորա սպիտակագոյն է. և գտանի սա 'ի յեզերսն Իբէացւոց ծովուն, և ասեն առասպելքն թէ յառաջագոյն ցուցանէ 'ի հողմն հարաւային զձմերունսն և զբերմունսն և զանձրևսն։

Ոսկէքարն ակն է զոր ոմանք ոսկեբիւրեղ կոչեցին. ոսկէգոյն է, և լինի սա առ եզերսն ջրհորոյն Բաբիլոնի, առ վիմին Աքիմինիդայ. զի հայրն Կիւրոսի թագաւորին՝ Աքիմինաս կոչիւր, որպէս ոմանք պատմագրեցին. և յորժամ լեսուք և ըմբէ, զստամոքսացաւսն և զորովայնածսն ողջացուցանէ և բըժըշկէ։

Բիւրեղն ակն է խաժագոյն, ծովանեկ, օդանման. և լինի սա 'ի սպառուած Տօրոս լերինն. իսկ եթէ ոք ունիցի զսա ընդդէմ արեգականն, երևի 'ի մէջն իւր լուսափայլ մանր որպէս ըզհատ ինչ կորեկան։ Իսկ կայ և այլ բիւրեղ, նման է բաց վիշապի. և այլ կայ որ նման է սպիտակ մոմոյ. և այլ կայ որ է նման սառին, և գտանի սա 'ի յանցսն Արիրատ գետոյ ընդ Տօրոս լեառն։

Աղունգն խարտեաշ ունի զգոյնն. և խնդան նովաւ բազում հարսունք թագաւորաց և դստերք մեծամեծաց. են և այլ եղենգնայք ոմանք մոմոյ մազոյ գունով, բայց ասեն ոմանք զսոցանէ 'ի կաթուածոց ջրոց մածուցեալ։ Իսկ եղենգնայս ասեն զսոսա ստուգաբանելով, վասն զի եղունգն մարդկան փայլուն է հանդերձ արեամբ կարմրագոյն տեսլեամբ. այլ և է իսկ զքարն կձեայ սուտ անուամբ եղենգնէ կոչեն վասն մաքուր սպիտակութեանն իւրոյ։

թե որպէս գրեալ էր 'ի վերայ ականցն ա-
ռհուանք նահապետացն :

Որդիք Լիայ ծնեալք 'ի Յակոբայ՝ են այսպէս . Ռուբէն , Շմաւոն , Լևի , Յուդայ , Իսաքար , Զաբուղոն : Եւ որդիք Հռաքելայ՝ Յոսէփ , Բենիամին : Եւ որդիք Բալլայ նաժշտին Հռաքելայ՝ Դան և Նեփթալիմ : Եւ որդիք Զելփայ նաժշտին Լիայ՝ Գադ և Ասեր : — Եւ գրեալ էր 'ի վակաս քահանայապետին այսպէս . Ռուբէն՝ 'ի սարդիոնն , Շմաւոն՝ 'ի տպազիոնն , Լևեայ՝ զմրուխտն , Յուդայի՝ կայծն , Դանայ՝ շափեղայն , Նեփթալիմի՝ յասպիսն , Գադ՝ լիգորոնն , Ասերայ՝ ակատն , Իսաքարայ՝ զամեթիստոնն , Զաբուղոն՝ ոսկէքարն , Յոսեփայ՝ բիւրեղն , Բենիամինի՝ եղունգն : Այսպէս յարմարեցելոց ականցն ըստ իւրաքանչիւր ցեղիցն :

ՄԱՆՐԱՎԷՊ

Վեհանձնութիւն մը :

Յտրուրիոյ Փալերիա քաղաքին բնակիչները Ալէյացւոց օգնութիւն տալուն պատճառաւ՝ Հռոմէական հասարակապետութիւնը բարկացած զերևելին Կամիլլոս մեծ գունդով մը անոնց վրայ խաւրեց : Եկաւ Կամիլլոս , պաշարեց քաղաքը , ու Հռոմէական գործունէութեամբ ամէն տեսակ հնարքներ արագ արագ կը պատրաստէր՝ շուտով մը քաղաքին տիրելու համար : Միտքը դրեր էր Կամիլլոս որ ինչուան իր արիւնն ալ տալով՝ Հռոմայեցւոց վրէժը Փալերիայէն հանէ . բայց դիպուածը , որն որ շատ անգամ ամենադիւրին բաները կը դժուարացընէ , այս անգամ ընդ հակառակն անկարծելի յաջողութիւն մը բացաւ իրեն առջև : Փալերիոյ ազնուականաց ու գլխաւորներուն տղոյ վարժապետը վատութեան գործողութիւն մը ուզեց ընել . առաւ օր մը այս տղաքները իբրև թէ պտտցընելու պիտի տանի , քաղաքէն դուրս հանեց ու դէպ 'ի Հռոմայեցւոց զօրավարին բանակը առաջնորդեց : Կամիլլոսի առջև որ ելաւ , " Հաւասիկ քեզ , ըսաւ , ո՜ Կամիլլոս , այնպիսի ընծայ մը , որով Փալերիոյ բանալիները ապահովութեամբ քու ձեռքդ կը յանձնուին . Փալերիոյ ազնուականաց տղաքները քու ձեռքդ են , և քու ահաւոր ղէնքերդդ աւելի՝ որդեսիրութեան յուսահատ կիրքը պատերազմի բաղդը որոշելու յարմար է " : Սոսկացաւ Կամիլլոս այս անլուր անօրէնութեան վրայ , որ այն վարժապետին քարի պէս ապառաժ սիրտը կը յայտներ . գութով մը նայեցաւ նախ այն անմեղ տղոյ վրայ , որ չէին իմանար թէ վտանգի մէջ էին և թէ հայրենեաց կեանքը իրենց վիճակէն կը կախուէր . ետքը սպառնալից աչուրները դարձընելով վարժապետին վրայ՝ " Ո՜յ անօրէն , աղաղակեց , գնա դու այդ զզուելի ընծադ այնպիսի ժողովրդեան մը , այն-